ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

ԴԱՍ 2.1. Ասիա: Ընդհանուր աշխարհագրական ակնարկ

• • •

Ասիայի ծայրակետերն են՝ հյուսիսում **Չելյուսկին** հրվանդանը (հս.լ. 77⁰43′) **Թայմիր** թերակղզում, հարավում՝ **Պիայ** հրվանդանը (հս.լ. 1⁰16′) **Մալակկա** թերակղզում, արևմուտքում՝ **Բաբա** հրվանդանը (արլ. երկ. 26⁰10′) Փոքր Ասիա թերակղզում, արևելքում՝ **Դեժնյովի** հրվանդանը (արմ. երկ. 169⁰40′) **Չուկոտյան** թերակղզում: Աշխարհամասի հյուսիսային հատվածը գտնվում է **Հյուսիսային Երկիր** կղզեխմբի հյուսիսային մասում, հարավայինը՝ **Մալայան** կղզեխմբի հարավային մասում՝ հարավային կիսագնդում, իսկ արևելքում՝ **Բերինգի** նեղուցում գտնվող **Դիոմիդ** կղզիների՝ **Ռատմանովի** կղզին:

Ասիայի ափերը հյուսիսում ողողում են Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի եզրային **Կարայի**, **Լապտևների**, **Արևելասիբիրական** ու **Չուկոտյան**, արևելքից՝ Խաղաղ օվկիանոսի եզրային ծովերը՝ **Բերինգի**, **Օխոտի**, **Ճապոնական** (Արևելյան), **Դեղին**, **Արևելաչինական**, **Հարավչինական**, ներքին՝ **Ճապոնական** ինչպես նաև միջկղզային **Ֆիլիպինյան** ու **Մալայան** կղզեխմբերում տեղաբաշխված ծովերը: Հարավում ափերը ողողում է Հնդկական օվկիանոսը՝ **Անդամանյան**, **Արաֆուրյան**, **Արաբական** եզրային ու ներցամաքային **Կարմիր** ծովերով, հարավ-արևմտյան մասում՝ Ատլանտյան օվկիանոսը՝ **Ազովի**, **Սև**, **Մարմարա**, **Եգեյան**, **Միջերկրական** ներքին ծովերով:

• • •

Ասիան գտնվում է Ամերիկա և Եվրոպա, ինչպես նաև Ավստրալիա և Օվկիանիա ու Աֆրիկա աշխարհամասերի միջև: Նրա տարածքով իրականացվում են տարանցիկ ուղևորափոխադրումներ և բեռնափոխադրումներ: Մի շարք երկրներ դրա շնորհիվ մեծ եկամուտներ են ստանում:

Արևմուտքից արևելք և հյուսիսից հարավ մեծ ձգվածության պատճառով աշխարհամասը գտնվում է Հյուսիսային կիսագնդի բոլոր ջերմային, կլիմա-

յական գոտիներում ու բնական զոնաներում:

Ասիան հարուստ է մետաղական, ոչ մետաղական, վառելիքային հանածոներով, հողային, ջրային, կլիմայական, անտառային, ագրոկլիմայական ու ռեկրեացիոն ռեսուրսներով: Ածխի պաշարներով հարուստ են Ռուսաստանը, Չինաստանը, Հնդկաստանը, Ղազախստանը, Վիետնամը, նավթով և բնական գազով՝ Պարսից ծոցի ավազանի երկրները, Իրանը, Ինդոնեզիան, Ղազախստանը, Թուրքմենստանը, երկաթաքարով՝ Ռուսաստանը, Հնդկաստանը, Ղազախստանը, ուրանով, պլատինով, ալմաստով՝ Ռուսաստանը, ոսկով՝ Ուզբեկստանը:

Անտառային ռեսուրսները հանդես են գալիս ջերմային երկու գոտիներում՝ բարեխառն (Ռուսաստան, Ճապոնիայի հյուսիս) և տաք (հասարակածային, մերձհասարակածային և արևադարձային երկրներ): Ջրային ռեսուրսներով հարուստ են Ռուսաստանը, Չինաստանը, Հնդկաչինի երկրները, որտեղով հոսում են հզոր ու ջրառատ գետեր: Աշխարհամասի ներքին շրջանների կլիման չորային ու խիստ ցամաքային է, առավելապես տարածվում են անապատներ ու կիսաանապատներ: Սակավաջուր, սակավահող և վատորակ հողերով (բեդլենդ) երկրներ են Սաուդյան Արաբիան, Իրանը, Պակիստանը, Իրաքը, Կենտրոնական Ասիայի երկրների մեծ մասը:

• • •

Ասիայի հարավ արևմուտքը և արևելքը աչքի են ընկնում աշխատանքային միգրանտների ներհոսքով (նավթարդյունահանող և արտահանող երկրներ, Պարսից ծոցի ավազանի, Չինաստան, Մալայզիա, Սինգապուր): Հարավային, Կենտրոնական ու Հարավարևելյան Ասիայի երկրներից միլիոնավոր մարդիկ որպես էժան աշխատուժ աշխատում են այլ տարածաշրջաններում: Դրա դասական օրինակներից մեկը Հնդկաստանից եկած աշխատանքային միգրանտների թվի կտրուկ ավելացումն է Հայաստանում՝ պաշտոնական տվյալներով՝ մոտ 30000:

Բարենպաստ հողակլիմայական պայմանների, բնակեցման պատմության, քաղաքակրթությունների զարգացման, բնական ու մեխանիկական աճի ցուցանիշների ու տնտեսության մասնագիտացման շնորհիվ Ասիայում են ձևավորվել Երկրագնդի բնակչության մեծ կուտակման մի շարք տարածաշրջաններ և օջախներ՝ **Չինաստանի արևելք**, **Կորեական** թերակղզի, **Սումատրա**, **Ճավա**, **Հոնսյու** կղզիներ, **Հնդկաչին**, **Ինդոս–Գանգես–Բրահմապուտրա** գետերի հովիտներ, **Ֆերգանայի հովիտ**, **Արարատյան դաշտ** և այլն: Իսկ անապատների, խոնավ հասարակածային և արևադարձային անտառների ու Սիբիրի անծայրածիր շատ տարածքներ գրեթե բնակեցված չեն:

• • •

Եթե դիտարկում ենք առանձին երկրների տնտեսական ցուցանիշները, ապա պարզ է դառնում, որ ՀՆԱ-ն բարձր է նավթ ու բնական գազ արդյունահանող, վերամշակող և արտահանող երկրներում (Պարսից ծոցի ավազանի երկրներ): Որոշ երկրներում արդյունաբերությունը բուռն զարգացավ բարձր տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ՝ Հարավային Կորեա, Սինգապուր, Թայվան: Առանձին երկրներ աչքի են ընկնում իրենց տարածքում զարգացած հզոր երկրներին պատկանող (ԱԱԿ-ների՝ Անդրազգային կորպորացիաների) ձեռնարկությունների տեղաբաշխմամբ, հատկապես՝ ավտոմոբիլաշինական, կապի և էլեկտրոնիկայի, համակարգչային տեխնիկայի, էլեկտրատեխնիկական՝ **Մալայզիա**, **Ինդոնեզիա**, **Թաիլանդ**, **Ֆիլիպիններ**, մասամբ՝ **Իրան** ու **Թուրքիա:**

• • •

Ասիա աշխարհամասի տարբեր տարածաշրջաններ առանձնանում են նաև տնտեսության մասնագիտացմամբ, ինչը պայմանավորված է բնակլիմայական պայմաններով, տնտեսության վարման պատմությամբ ու բնակչության մասնագիտացմամբ: Այսպես, Հարավարևմտյան Ասիային բնորոշ են ցիտրուսների, ձիթապտղի, խաղողի մշակությունը, այծաբուծությունը, ոչխարաբուծությունը, ուղտաբուծությունը, գորգագործությունը, նավթի և բնական գազի արդյունահանումն ու վերամշակումը: Կենտրոնական Ասիային՝ բամբակագործությունը (Ուզբեկստան): Արևելյան Ասիային բնորոշ են թեյի ու բրնձի մշակությունը, մետաքսագործությունն ու բամբակագործությունը (Ուզբեկստան, աշխարհի բամբակի 11%-ը), տրանսպորտային, էլեկտրատեխնիկական և էլեկտրոնային մեքենաշինությունը: Ասիա աշխարհամասում առկա են բազմաթիվ բնակլիմայական և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ՝ պարենի (Հարավային, Հարավարևելյան Ասիա), ուրբանացման (Բանգլադեշ, Պակիստան, Հնդկաստան, Ինդոնեզիա), տարաբնակեցման (Ինդոնեզիա, Հնդկաստան, Բանգլադեշ): Հիմնախնդիրներ կան որոնք տարբեր ձևերով առկա են բոլոր երկրներում: Օրինակ՝ տրանսպորտային, որը «գերհագեցած» է Ճապոնիայում, Իսրայելում, իսկ Եմենում, Լաոսում դեռևս նոր է ձևավորվում տրանսպորտային համակարգը:

• • •

Արևմտյան սահմանը ցամաքային է և Եվրոպայից պայմանականորեն բաժանվում է **Ուրալյան** լեռների արևելյան ստորոտով, Էմբա գետով,

Կասպից լիճ-ծովի հյուսիսային հատվածով, **Կումա** գետով, **Մանիչյան** լճերի գոգավոր մասով, **Ազովի** ծովով, **Կերչի** նեղուցով, **Սև ծովի** ափերով, **Բոսֆորի** նեղուցով, **Մարմարա** ծովի կենտրոնական մասով, **Դարդանելի** նեղուցով և **Էգեյան** ծովի արևելյան ափով:

• • •

Ասիայի երկրների ճնշող մեծամասնությունը աչքի է ընկնում բնական աճի բարձր ցուցանիշներով՝ Աֆղանստան, Մյանմա, Եմեն, Իրան: Բնակչության ազգային կազմը խայտաբղետ է: Ապրում են **Հնդեվրոպական**, **Չին-տիբեթական**, **Ալթայան**, **Սեմաքամյան** և այլ լեզվաընտանիքներին պատկանող էթնոսներ: Երկրագնդի մեծաթիվ էթնոսների մեծ մասն ապրում է Ասիայում՝ չինացիներ, հնդստանցիներ, բենգալացիներ, ճապոնացիներ և այլք:

• • •

Սա այն երևույթն է, երբ բարձրահարկ (երկնաքեր) շենքերի հարկերը շատանում են, շինությունները՝ ավելի բարձրանում (օրինակ՝ Քուալա Լումպուր): Երևույթը բնորոշ է Պարսից ծոցի ավազանին (օրինակ՝ Դուբայ) և Հարավարևելյան ու Արևելյան Ասիային (Չինաստանի քաղաքները, Հոնկոնգը):